

Մրցույթի ժամկետը երկարացվել է մինչև հոկտեմբեր 31, 2022թվ:

Սեպտեմբերի 5-ից կատարված բոլոր գործարքները հաշվարկում ներառվելու են և պայմաններն ամփոփոխ են: Միայն ժամկետի մասով են եղել փոփոխությունները:

1. Ինչպե՞ս կարող եմ մասնակցել մրցույթին:

- Եթե Կոնվերս Բանկի հաճախորդ եք, օգտվում եք Converse Mobile հավելվածից և ունեք Visa Virtual, ապա պետք է սեպտեմբերի 5-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ կատարել հանրագումարային 15.000 ՀՀ դրամի անկանխիկ գործարքներ՝ գնումներ:
- Եթե Կոնվերս Բանկի հաճախորդ եք, ունեք Visa Virtual, սակայն չունեք Converse Mobile հավելված, անհրաժեշտ է մուտք գործել Ձեր հավելվածների store /App Store, Play Market/ և ներբեռնել Converse Mobile հավելվածը, և Visa Virtual -ով կատարել հանրագումարային 15.000 ՀՀ դրամի անկանխիկ գնումներ:
- Եթե Կոնվերս Բանկի հաճախորդ եք, ունեք Converse Mobile հավելված, սակայն չունեք Visa Virtual, ապա անհրաժեշտ է Converse Mobile հավելվածում կատարել Visa Virtual քարտի պատվեր կամ օնլայն պատվիրել conversebank.am կայքի միջոցով: Քարտը պատրաստ կլինի 5 աշխ օրվա ընթացքում: Կատարում եք հանրագումարային 15.000 ՀՀ դրամի անկանխիկ գնումներ այդ քարտով և դառնում մրցույթի մասնակից:
- Եթե Կոնվերս Բանկի հաճախորդ եք, սակայն չունեք Converse Mobile հավելված և Visa Virtual, անհրաժեշտ է conversebank.am կայքի միջոցով կամ Ձեզ հարմար մասնաճյուղ այցելությամբ ձեռք բերել Visa Virtual քարտ: Ապա Ձեր հավելվածների store-ից/App Store, Play Market/ ներբեռնեք Converse Mobile հավելվածը, մուտք գործեք, գրանցվեք և կատարեք հանրագումարային 15.000 ՀՀ դրամի անկանխիկ գնումներ:
- Եթե Կոնվերս Բանկի հաճախորդ չեք ապա անհրաժեշտ է մոտենալ Կոնվերս Բանկի Ձեզ հարմար մասնաճյուղ՝ բացել հաշիվ և պատվիրել Visa Virtual քարտ, ներբեռնել Converse Mobile հավելվածը, մուտք գործել և գրանցվել: Քարտի տրամադրումից հետո կատարել հանրագումարային 15.000 ՀՀ դրամի անկանխիկ գնումներ:

2. Ի՞նչ նվերներ են հնարավոր հաղթել:

- Գլխավոր մրացանակը Ամստերդամում կայանալիք Don't Let Daddy Know փառատոնի տոմս 2 անձի համար: Փառատոնի օրը՝ մարտի 4, 2023թ:
- 3 հատ Samsung Galaxy S22,
- 3 հատ JBL ականջակալներ,
- 3 հատ Galaxy Buds Pro R190
- 5 հատ Amazon նվեր քարտեր:

3. Ինչպե՞ս պետք է տեղեկանամ, որ դարձել եմ մրցույթի մասնակից և ներառված եմ մասնակիցների ցանկում:

Մեպտեմբերի 5-ից 00:01-ից հոկտեմբերի 31-ը 24:00 ներառյալ Visa Virtual քարտով կատարել հանրագումարային 15.000 ՀՀ դրամի անկանխիկ գործարքներ: Մրցույթի ավարտից հետո Բանկում գրանցված Ձեր էլեկտրոնային հասցեին կստանաք անհատական կոդ, որով կարող եք մասնակցել մրցույթին: Տեղեկացնենք, որ կատարած յուրաքանչյուր հանրագումարային 15.000 ՀՀ դրամի դիմաց ստանում եք 1 անհատական կոդ: Յուրաքանչյուր հաջորդ 15.000 ՀՀ դրամի դիմաց համապատասխանաբար ստանում եք նոր հաջորդ կոդ: Բոլոր տրամադրված կոդերը մասնակցում են մրցույթին:

4. Ո՞նց եմ ստանալու անհատական կոդը:

Անհատական կոդը ստանալու եք Բանկում գրանցված Ձեր էլեկտրոնային հասցեին կամ հեռախոսահամարին մրցույթի ամփոփումից հետո մինչ նոյեմբերի 30-ը ներառյալ, կատարած յուրաքանչյուր հանրագումարային 15.000ՀՀ դրամի դիմաց կատարված գործարքների համար:

5. Արդյո՞ք կարող եմ մասնակցել մրցույթին, եթե միայն կից քարտ ունեմ:

Ոչ, հավելյալ և կից քարտերը չեն մասնակցում մրցույթին, հետևաբար կատարված գործարքները հաշվարկին չեն մասնակցում:

Եթե ունեք Converse Mobile հավելված, կարող եք 2 րոպեների ընթացքում քարտի պատվեր կատարել և ակտիվացնելով քարտը մասնակցել մրցույթին:

6. Բոլոր գործարքները կարո՞ղ եմ մասնակցել հաշվարկին:

Քարտից քարտ փոխանցումները, քարտից այլ հաշիվ փոխանցումները, կոմունալ վճարումները /ներառյալ հեռահաղորդակցման, հեռուստատեսության, ինտերնետ ծառայությունների վճարները/, հաշիվների, քարտերի, էլեկտրոնային դրամապանակների համալրումները, վարկի մարումները, խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների, վիրտուալ խաղատների և խաղադրույք ընդունող ընկերությունների հաշիվների համալրումները, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուրքերը, տուժանքները, օրենքով պարտադրված հարկերի վճարները, մուծումները, այլ վճարները և Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնությունները չեն մասնակցում անկանխիկ գործարքների հաշվարկին:

Հաշվարկին չեն մասնակցում նաև այն գործարքները, որոնց գծով կատարվել է գործարքի հետվերադարձ:

7. Ո՞վ կարող է դառնալ մրցույթի մասնակից:

Մրցույթին կարող են մասնակցել 18 տարին լրացած ֆիզիկական անձ, ՀՀ ռեզիդենտ հաճախորդները, բացառությամբ Բանկի աշխատակիցների:

8. Եթե իմ քարտը արտարժույթային է, ինչպե՞ս է կատարվելու հաշվարկը:

Անկանխիկ գործարքների ծավալի հաշվարկը կկատարվի հետևյալ սկզբունքով՝ ՀՀ դրամ արժույթով քարտերի դեպքում հաշվարկին կմասնակցի հաշվեգրված գումարի դրամային արտահայտությունը, իսկ արտարժույթային քարտերի դեպքում՝ քարտի արժույթով հաշվեգրված գումարը փոխակերպված դրամի հաշվեգրման օրվա համար սահմանված ՀՀ ԿԲ փոխարժեքով:

9. Ինչպե՞ս են ընտրվելու հաղթող մասնակիցները:

Մրցույթի հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Ձեզ տրամադրված անհատական կողերից պատահական ընտրության միջոցով: Ձեզ տրամադրված բոլոր եզակի անհատական կողերը մասնակցում են մրցույթին միմյանցից անկախ:

10. Ինչպե՞ս եմ տեղեկանալու, որտե՞ղ և ե՞րբ է կայանալու մրցույթի ամփոփումը:

Մրցույթի ամփոփումը կիրականացվի Կոնվերս Բանկի ֆեսբուքյան էջի ուղիղ հեռարձակման միջոցով՝ մինչև ս/թ դեկտեմբերի 10-ը ներառյալ: Օրվա և ժամի մասին կուղարկենք ծանուցում Ձեր էլեկտրոնային հասցեին կամ բջջային հեռախոսահամարին: Նաև հաղթող ճանաչված անհատական կողերը կիրապարակվեն՝ Բանկի պաշտոնական էջում և ֆեսբուքյան էջում՝ մինչև ս/թ դեկտեմբերի 15-ը:

11. Կարո՞ղ եմ հաղթած մրցանակը փոխարինել համարժեք գումարով:

Հաղթող մասնակիցներին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի իրականացում և մրցանակը չի փոխարինվում այլ նվերով:

12. Կարող եմ գլխավոր մրցանակը փոխանցել այլ անձի:

Դուք իրավունք ունեք Գլխավոր մրցանակը փոխանցել/նվիրել իր ընկերոջը, այն պայմանով, որ Ձեր ընկերը ունենա Մոբայլ հավելված և լինի ակտիվ հաճախորդ ակտիվ հաճախորդ է համարվում վերջին մեկ ամսում առնվազն մեկ գործարք կատարած անձը: Այս ձևակերպումը կիրականացվի հավելվածի չատ օգնականի միջոցով, որտեղ հաճախորդը պետք է տրամադրի ընկերոջ տվյալները նույնականացման համար: Նվերի փոխանցման առավելագույն ժամկետն է 2022թ. Դեկտեմբերի 23-ը 18:00: Այլապես Գլխավոր մրցանակը կճանաչվի ուժը կորցրած:

13. Ինչպե՞ս պետք է ստանամ մրցանակը:

Մրցանակները ստանալու եք ամփոփիչ միջոցառման ժամանակ, որի անցկացման վայրի և ժամանակի մասին Բանկը Ձեզ կտեղեկացնի Բանկում առկա Ձեր էլեկտրոնային հասցեին ծանուցմամբ և/կամ հեռախոսազանգի միջոցով:

14. Ես գտնվելու եմ երկրից դուրս և գուցե չկարողանամ մասնակցել ամփոփիչ միջոցառմանը, ի՞նչ պետք է անել:

Ներկա գտնվելու անհրաժեշտություն չկա, մրցույթը կայանալու է Կոնվերս Բանկի ֆեստիվալի էջի ուղիղ հեռարձակման միջոցով: Կարող եք հետևել ամբողջ ընթացքին: Հաղթողների ցուցակը կհրատարակվի մեր ֆեստիվալի էջում և Բանկի ինտերնետային կայքում:

15. Կարո՞ղ եմ մի քանի մրցանակ հաղթել:

Այո, եթե Ձեր եզակի անհատական կողերից մի քանիսն են պատահականության սկզբունքով հաղթող ճանաչվել, ապա մրցանակները ևս կարող են լինել մեկից ավելի:

16. Ես ստացել եմ սմս հաղորդագրություն/մեյլ, ի՞նչ է սա նշանակում:

Կոնվերս Բանկը աննախադեպ մրցույթ է կազմակերպել, որը հնարավորություն է տալիս խաղարկությամբ ստանալ տարբեր մրցանակներ: Քանի որ Դուք շուտ եք տեղեկացել մրցույթի մասին կարող եք ժամանակ չկորցնել և սկսել անկանխիկ գործարքներ անել հենց այսօրվանից: Զանգերի կենտրոնի մասնագետը հաջորդիվ ներկայացնում է մրցույթի պայմանները: